

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2015  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- |  |   |
|--|---|
| ՀՀ ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալ  | Վ. Տերտերյանի                                   |
| ՀՀ ՏԿԱԻ նախարարի տեղակալ   | Կ. Իսախանյանի                                   |
| ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարության աշխատակազմի<br>փրկարար ծառայության տնօրեն                       | Ս. Ազարյանի                                     |
| ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի<br>նախարարի առաջին տեղակալ                             | Ա. Պետրոսյանի                                   |
| ՀՀ Առողջապահության նախարարության<br>բժշկական օգնության քաղաքականության<br>վարչության պետ | Ծ. Վարդանյանի                                   |
| ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝   | Լ. Մուրադյանի<br>Դ. Սամսոնյանի<br>Մ. Քարտաշյանի |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի<br>ղեկավար՝   | Փ. Կարապետյանի                                  |
| ՀՀ Արմավիրի մարզի դատախազ  | Ա. Սիմոնյանի                                    |
| ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային<br>վարչության պետ                                     | Ա. Այվազյանի                                    |
| ՀՀ հանրապետական գործադիր մարմինների տարածքային<br>ծառայությունների ղեկավարների           |   |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության<br>առողջապահական կազմակերպությունների ղեկավարների |   |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի<br>կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների     |   |
| Լրատվամիջոցների ներկայացուցիչների  |   |

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ '

### **1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի նիստի օրակարգը հաստատելու մասին**

/Ա. Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

### **2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:**

/Ա. Ղահրամանյան-ՀՀ  
Արմավիրի մարզպետ/

### **3. Հայտարարություններ՝**

Ա. Այվազյան -

ՀՀ Արմավիրի մարզպետարանի  
աշխատակազմի  
գյուղատնտեսության և  
բնապահպանության վարչության պետ

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի նիստի օրակարգը:

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 -րդ կետի 13-րդ պարբերությամբ՝**

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝**

**Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2015 թվականի փետրվարի 13-ի նիստի օրակարգը:**

Օրակարգային երկրորդ հարցով ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը հանդես եկավ իր 2014 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությամբ:/հաշվետվությունը կցվում է/:

Մարզպետ Ա. Ղահրամանյանը մասնավորապես անդրադարձավ մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցերին՝ ներկայացնելով տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության, հանրապետական գործադիրի մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության, ֆինանսական, արդյունաբերության, փոքր և միջին ձեռնարկատիրության /ՓՄՁ/ առևտրի և ծառայությունների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության,

գյուղատնտեսության և բնապահպանության, հողաշինության և հողօգտագործման, առողջապահության և սոցիալական ապահովության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության. կրթության, մշակույթի և սպորտի, արտաքին կապերի և տեղեկատվության բնագավառներում իրականացրած աշխատանքները:

Իր խոսքում մարզպետն ընդգծեց, որ 2014 թվականի ընթացքում Արմավիրի մարզում քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակը եղել է կայուն: Ըստ նրա՝ ոլորտային ձեռքբերումներն ու հաջողությունները հնարավոր է եղել ապահովել բոլոր պետական կառույցների, տեղական, միջազգային և հասարակական կազմակերպությունների, ՀՀ-ների հետ սերտ համագործակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի. վարչապետի, նախարարների և այլ գերատեսչությունների ղեկավարների մարզ կապարած այցելությունների և տրված հանձնարարականների արդյունքում:

Օրակարգային հարցի ավարտից հետո հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարի առաջին տեղակալ Արայիկ Պետրոսյանը՝ տեղեկացնելով, որ Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրով Արմավիրի մարզում նախատեսված է իրականացնել «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագիրը՝ հաստատված ՀՀ կառավարության 2014թ ապրիլ ամսին ընդունած համապատասխան որոշմամբ: Դրանք լինելու են նոր ծրագրեր նոր մոտեցումներով դրանց իրականացման համար: Ա. Պետրոսյանը հորդորեց համայնքների ղեկավարներին սեղմ ժամկետներում համայնքներից հավաքագրել և նախարարություն ներկայացնել շուրջ 218 հողօգտագործողների վերաբերյալ տեղեկատվություն՝ սահմանված ձևաչափով:

Հայտարարությամբ հանդես եկավ նաև ՀՀ Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ Ծաղիկ Վարդանյանը՝ մասնավորապես ներկայացնելով նախարարության կողմից մարզերում 2013-2014թթ իրականացված առողջապահական համակարգի քարտեզագրման գործընթացը, որն իր մեջ ներառում է մարզի կտրվածքով ամբողջ առողջապահական համակարգի իրավիճակը, ընդհանուր ցուցանիշները, ոլորտին վերաբերող առանցքային բոլոր խնդիրներն ու հարցերը՝ նպատակ հետապնդելով առավել ուղղորդված իրականացնել ոլորտային ծրագրերն ու միջոցառումները: Ծ. Վարդանյանն իր խոսքում անդրադարձավ նաև հանրապետությունում մեկնարկած սրտի անհետաձգելի վիրահատության և

ազգաբնակչության համար անվճար զանգվածային սկրինինգային ծրագրերին, որն իր մեջ կընդգրկի սիրտ անոթային համակարգի, շաքարային դիաբետի և ուռուցքաբանությանն առնչվող հիվանդությունների և դրանց հետ կապված խնդիրների առավել վաղ ախտորոշմանն ու բացահայտմանը, որի արդյունքում առավել արդյունավետ կլինի դրանց հնարավոր կանխարգելումն ու բուժումը:

Օրակարգային հարցերի ու հայտարարությունների համապատասխանաբար քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

**ՄԱՐԶՊԵՏ՝**

**Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**



Արձ.՝ Մ. Առուշանյան